ՀԱՍՑԷ

M. ARCHAM
Poste Restante
ATHÈNES [Grèce]

Խմբագրութեանս ուղղուած նամակ կամ այլ գրութիւնք եւ չեն գրկուիր։
Յաղորդագրաց պարտական գտնուածները վիճակն պիտի հրատարակուին։

ՄԻՈՒԹԻՒՆ

ՕՐԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ ԳԱՂԱՓԱՐԻ

ԱՄՍԱԹԵՐԹ ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆ

Առանձին տեղերու համար գինն է
Տարեկան արտաքին ֆրանք 5
Վեցամսեան » » 3
Եռամսեան » » 2
Մէկ թիւը կ'արժէ սանթիմ 50
Բաժանողները կանխիկ վճարել են։
Փոխի ծախքը խմբագրութեան կը պատկանի։

Բ. ՏԱՐԻ — ԱԹԷՆՔ 1897 ՀՈԿՏԵՄԲԵՐ — 15

ԲԱԲԻԼՈՆԻ ԱՇՏԱՐԱԿԸ

Մարդ մը, եթէ ձեռքը ճակատին դնէ և պահ մը լրջօրէն խորհի մեր տարաբաղդ ազգի արդի կացութեան վրայ, և մանաւանդ երբ հետազօտ հայեցուած մը արձակէ հայ յեղափոխականութեան իր տասը տարուան կեանքի մէջ բռնած ընթացքին վրայ, անտարակոյս պիտի համոզուի թէ՝ Բաբիլոնի աշտարակաշինութեան հին դարուն մէջ կը գտնուինք, այնպէս որ լեզուներս խառնուած տարբեր արտասանութեամբ իրարու խօսք չենք հասկնար։ Այս դժբաղդութեան գլխաւոր պատճառներն եղած են մեր գործիչներու եսականութիւնն ու պարզ ժողովրդի տգիտութիւնը, որոնք դժբաղդաբար դարերէ ի վեր մեր մէջ մուտ գտած, օր ըստ օրէ կը բազմապատկին մեր թշուառութիւնները։

Մեր մէջ փոքր ի շատէ զարգացած մասը, ժողովրդին ճակատագիրը իրեն համար անձնական գործ ընտրելով՝ կը նեղուի ազգայնը հրատարակը և կը սկսի իր ճոռոմաբանութեամբ մեծամեծ խոստումներ ընել, որպէս թէ՝ ինք իր հանճարով ազգը պիտի ազատէ։ Իսկ մենք ոգէտ հայերս հաւատալով՝ միամտաբար կը հետեւինք անոր և նիւթապէս կը քաջալերենք գինքը։ Շատ ժամանակ չանցնիր, ահա կը տեսնենք որ այսօրինակ կարծեցեալ հայրենասէրները իրենց գոյնը գուրս տալով մէյ մէկ փոքր ձանք կը դառնան մեր գլխուն։

Ամեն դիւղ մէյ մէկ ձայն կուգայ, ան մը ժողովուրդը դանդաղ ճիւղերու բաժնեցինք, Դաշնակցական, Նաղարբէկ-Հնչակեան, Մարտական-Հնչակեան, Արմէնիական, Միութենական և այլն, ամենքն ալ իրարու ոխերիմ թշնամի կարծես թէ իրարու հայր կամ եղբայր սպանած են։ Մէկը կը գոչէ. եկէք մեր դրօշին տակ համախմբուելով միայն՝ Մրկրարդը կը հռչակէ թէ՝ այդպիսի կուսակցութիւն մը գոյութիւն չունի։ Միւս մին ալ՝ պահպանողական պայմաններ կ'առաջարկէ միանալու համար։ Ուրիշ մին ալ ամենուն հակառակ է. նոյն իսկ միութեան դաղափարին դէմ գլխելով, կոչում կ'ընէ հայ հասարակութեան որ՝ ոչ մէկուն կարևորութիւն չընծայելով անպայման կերպով իրեն հետեւին և նիւթական աջակցութեամբ քաջալերեն գինքը։ Իսկ մենք իրաց այս խառնափոթ և բաբիլոնական կացութեան մէջ թշուառացեալ հայ ժողովրդի հետ միացած՝ մեր ուժգնակն ձայնով նոր միանուագ ՄԻՈՒԹԻՒՆ, ՄԻՈՒԹԻՒՆ կը գոչենք։

Այս անորոշ վիճակին միանգամ ընդմիշտ վերջ տալու համար պատշաճ համարեցինք հայ ժողովրդի պահանջած «հինգեան միութեան» պայմանները հրատարակել և ըստ պատեհ մեր յեղափ. կուսակցութեանց պատասխանին։ Եթէ այս անգամ ալ ժողովրդի ձայնը անտեսի մնայ, միջոցներ չեն պակասիր ժողովուրդին իր նպատակը իրագործելու համար։

ՄԻՈՒԹԻՒՆԸ ՅԱՋՈՂՑՆՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ՊԱՏՄԱՆՆԵՐ

1.— Արտասահմանի կեդրոնական յարմարագոյն քաղաքի մը մէջ կազմել առ ժամանակեայ պաշտօն ունեցող մի յանձնաժողով, հայ հասարակութեան՝ և մանաւանդ յեղափոխականաց վստահութիւնն ու համարումը գրաւող չէզոք անձնաւորութիւններէ բաղկացեալ։

2.— Յանձնախումբը՝ բոլոր յեղ. կուսակցութեանց կեդրոններու, պիւռօներու, մասնաճիւղերու և քօմիթէներու լիազօր ներկայացուցիչները կը հրաւիրէ ժողովավայրը։

3.— Անկարգութեանց և այլ խժդժութեանց տեղի չտալու համար, բացի հրաւիրուած պատգամաւորներէն ուրիշ ոչ ոք անհատ ժողովին մասնակցելու իրաւունք չունենայ։ Ժողովն իր դանդաղ նիստերու գործունէութեանց արդիւնքները հեռագրէ մասնաւոր թռուցիկներով հաղորդէ հասարակութեան, իրեն վերապահելով էական գաղտնի կէտերը։

4.—Յանձնախումբը իբրև համարառու մարմին՝ Յեղափոխական կուսակցութեանց ընդհանուր հաշուեկշիռը աչքէ անցուցէ, եթէ ունին պարատի դրամ, յանուն հայ հասարակութեան պահանջելով դրամը ստանայ և առժամապէս յանձնէ ապահով պանքայի մը ազգին անուան տակ, մինչև ցնոր անօրէնութիւն։

5.— Յեղափոխական կուսակցութեանց մէջ մինչև ցարդ պատահած ինչ ինչ թերութիւնները և դեղծումները նկատի չառնել, և անոնց վրայ ծանրանալով դրամ չպահանջել եթէ կրնան գօրաւոր փաստերով ապացուցանել իրենց դրամ չունենալը։

6.—Գործին սիրոյն համար յեղափոխական մարմնէն հեռացնել այն անձերը, որոնց անցեալն արատաւորուած և ներկան կասկածելի թուած է շատերուն, ըլլայ իրողութիւն ըլլայ զրպարտութիւն։

7.—Ջնջել «Հնչակ» և «Դրօշակ» այսինքն Հնչակեան և Դաշնակցական կուսակցութեանց անունները, և մի նոր անուն տալ նորակազմ վարչութեան ԱԶԳԱՅԻՆ ՅԵՂ. ՄԻԱՑԵԱԼ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆ անունով, ինչպէս Յունաստանը՝ որ ունի այժմ, Էθνική Ἑταιρία (Ազգային ընկերութիւն), և ապստամբութեան ժամանակ ունեցած է Φιλική Ἑταιρία (Բարեկամական ընկերութիւն) որուն կեդրոնը հաստատուած էր Ռուսիոյ Օտէսա քաղաքին մէջ։

8.—Կեդրոնական վարչութիւնը պէտք է բաղկանայ հինգ անդամներէ, որոնց երկուքը ըլլան առաջին դասակարգի պատկանող, նիւթական և բարոյական կարողութեան տէր անձինք, իսկ երեքը յեղափոխական կուսակցութեանց ներկայ վարիչներէն։

9.—Վարչութիւնը ինք՝ կ'ընտրէ արտասահմանի և Թուրքիոյ կեդրոնական քաղաքներու մէջ փորձառու և վստահելի լիազօր ներկայացուցիչներ, որոնք միայն ուղղակի յարաբերութիւն ունենան Կեդրոնին հետ։

10.—Լիազօր ներկայացուցիչները իրենք պէտք է ընտրեն՝ տեղւոյն շրջակայ գաւառներու մէջ 2-3 անդամներէ բաղկացեալ մասնաճիւղեր և անոնց պաշտօնը վերացնել Կեդրոնէն։

11.—Գաւառներու մասնաճիւղերը պէտք է շարժին իրենց լիազօր ներկայացուցչի խորհրդով առանց վերահասու ըլլալու Կեդրոնի գաղտնիքներուն։

12.—Ամեն տեղերու մասնաճիւղերը իրենց ներկայացուցչի նախաձեռնութեամբ կարող ըլլան իրենց խորհուրդները գործադրել, առանց Կեդրոնէն հրահանգ սպասելու, եթէ գործը ստիպողական է և ժամանակը չներեր։ Իսկ մեծ գործի մը համար անհրաժեշտ ըլլայ Կեդրոնէն հրաման ստանալ։

13.—Երկրի բոլոր ներկայացուցիչները իրարու հետ գաղտնի յարաբերակցութիւն ունենալով, Կեդրոնի հետ կապուած ըլլան։

14.—Կեդրոնական վարչութիւնը պէտք է ամենքան բարձր մարմին մը նկատուի, որ մինչև իսմբագրութեան աստիճանին չդիջանի, այսինքն իրեն համար պաշտօնական թերթ չունենայ, այլ իր ուրուագիները մասնաւոր թռուցիկներով ծածկաբար հաղորդէ ուղղակի իր ներկայացուցիչներուն։ Հրապարակի վրայ տեսնուած գործերը միայն կրնան անհատական թերթերը հրատարակել։ Կեդրոնը՝ այս թերթերէն մին կրնայ իրեն կէս-պաշտօնական թերթ ընտրել և իր կոչումները անոր միջոցաւ հրատարակել։

15.—Իրաւունք չտալ ազգային և ոչ մի անհատ հասարակաց գաղափարը յուզող և կուսակցական ոգի ներշնչող ոչ և է գաղափարի օրկան թերթ հրատարակել։ Այս յօդուածի տրամադրութիւնը բռնաբարող անձերը պէտք է հռչակուին խռովարար, ազգային շահերու հակառակ և իբր որոշ դաւաճաններ հալածուին ու խստիւ պատժուին. ըստ ներքին Հրագրի նորակազմ վարչութեան։

16.—Կեդրոնական վարչութիւնը կ'որոշէ ազգային տուրք մը, որուն պէտք է մասնակցի ընդհ. հայութիւնը, ըլլի հարուստ՝ ըլլայ աղքատ։ Ամենաաջատ հայ անհատ մը կարող է գոնէ ամսական կէս ֆրանք վճարել, առանց կասկածելու. քանի որ կեդրոնը կազմուած պիտի ըլլայ բարձր և վստահելի անձնաւորութիւններէ։

17.—Մասնաճիւղերը իրենց տեղին ազգայիններէն դրամները դանձելով՝ մէկ քառորդ մասը պահեն իրենց սնտուկի մէջ պատահական արտաքոյս ծախքերու համար և երեք չորրորդ մասը տեղւոյն ներկայացուցչին միջոցաւ կը ղրկեն Կեդրոն։

18.—Կեդրոնը իր ստացած գումարները պէտք է ապահով դրամատուն մը յանձնէ միշտ ազգին տրամադրութեան տակ ըլլալու պայմանաւ, ոչ թէ դրամը պանքին յանձնող անձերու անուան տակ։

19.—Վարչութիւնը պարտաւորի վեց ամիսն անգամ մը գաղտնի թռուցիկներով բոլոր լիազօր ներկայացուցիչներու հաղորդել ելմըտական ընդհ. հաշուեկշիռը։

20.—Կեդրոնը եթէ երբեք ուզէ յեղափոխական շարժում մը առաջ բերել, պարտի բոլոր լիազօր ներկայացուցիչներու դաղափարը առնել, և ապա անոնց խորհրդով գործադրել։

21.—Միայն կեդրոնականները և բոլոր լիազօր ներկայացուցիչները պէտք է ստանան աստիճանաբար ամսաթուականներ, որոնց քանակութիւնը՝ երկրին համեմատ կեդրոնը կ'որոշէ։

22.—Երկու կամ երեք տարին անգամ մը ընդհ. ժողով գումարել բոլոր պատգամաւորներու (լիազօր ներկայացուցիչ) ներկայութեամբ, այն ներկայացուցիչները՝ որոնք ինչ ինչ բանաւոր պատճառներով չեն կարող ներկայ գտնուիլ, կրնան իրենց ձայնը փոխանորդաբար տալ ուրիշ մօտակայ և ծանօթ ներկայացուցչի մը, որ ընդհ. ժողովին մէջ երկու կամ երեք ձայն կ'ունենայ։

23.—Կեդրոնը ընդհ. ժողովի առջև իր համարատուութիւնը ընելէ յետոյ, կը ձեռնարկուի նոր ընտրութեան ներկայացուցչաց գաղտնի քուէարկութեամբ և նորընտիր անդամները (լիազ. ներկ.) դարձեալ կը մեկնին իրենց պաշտօնավայրերը։

24.—Միութեան գործը կարգադրող յանձնախումբը՝ Դաշնակցական և Հնչակեան կուսակցութեանց ձեռնհաս և կարող ներկայացուցիչներու ներկայութեամբ և անոնց գաղտնի քուէարկութեամբ նոր կեդրոնը կազմելէ յետոյ իր առժամանակեայ պաշտօնը կատարած ըլլալով կը հեռանայ գործէն, եթէ նորակազմ վարչութեան մէջ անդամ չէ ընտրուած։

ՀԱՅԿԱԿԱՆ ԽՆԴԻՐԸ ԵՒ ԹՈՒՐՔԻԱՆ

Տեղւոյս «Բօմպա» գազ. թերթը՝ Գէորգ թագաւորին դէմ խիստ յօդուած մը հրատարակելով անիւթանական նկատուելու և միևնոյն ժամանակ արգիլուելու հրատարակութիւնը, հետևաբար Կ. Պոլսէն ստացած հետեւեալ թղթակցութեան մէկ մասը միայն իր վերջին թուով ի լոյս ընծայելով բնագիրը յանձնեց մեզ ի հրատարակութիւն։

Altental (ոճիր) նկատած են Պանքայի և Բ. Դրան վերջին դէպքերը։ Թող ներուի ինձի դիտել տալ թէ՝ ոճիր մը միշտ չարամտութեամբ կը գործուի. մինչ այդ դէպքերուն հեղինակները բնաւ չարամտութիւն ունեցած չէին այդ գործին մէջ, այլ բացարձակ անձնուէրի պաշտօնը կատարած են։ Ամեն տեղ և առաւելապէս Թուրքիոյ մէջ, Հայերը սճրագործութենէ միշտ հեռու ապրած և համբաւեալ են իբր խաղաղ և պարկեշտ ազգ մը։ Կատարուած դէպքերը ինչպէս որ են իրօք, զուտ քաղաքական նկատենք, դարձեալ անիր ըլլալէ հեռու են. —Հայը ոճիրէ կը խորշի միշտ։

Պատմեմ թէ գործը ի՛նչպէս ընկած է և ի՛նչ առթիւ ներկայ դէպքերուն հասած է։

Քայնարճայի դաշնագրէն ի վեր Ռուսիա և Եւրոպայի ուրիշ պետութիւնները Թուրքիոյ քրիստոնեաներու ուղղակի կամ անուղղակի պաշտպանութեան ու ապահովութեան երաշխաւորած էին յանուն կրօնի։ 1839ի Կիւլհանէի Խաթթը Հիւմայունը, 1856ի Բարիզի դաշնագրութիւնը Թուրքիան պարտաւորած են Եւրոպական հսկողութեան ներքև իր քրիստոնեայ հպատակներու կրօնքը, ազգայնութիւնը, պատիւը, ստացուածքը, կեանքը յարգել ու պահպանել։ Պերլինի դաշնագիրը աւելի առաջ երթալով՝ Հայկական գաւառներու բարեկարգութիւնը պահանջեց և ստիպեց Թուրք կառավարութիւնը՝ պարբերաբար հաշիւ տալ իր գործելիք բարեկարգութիւններուն համար։ Թուրքիա յօժարակամ խոստացաւ Եւրոպայի բաղձանքը իրագործել։—Թուրք կառավարութիւնը միշտ շռայլ է խոստումի մէջ—գործնականին մէջ զէրո. . . . . .

Հայերը, արդէն Պերլինի դաշնագրի թուականէն առաջ միշտ կը գանգատէին, միշտ կը բողոքէին քիւրտերու, Թիւրքերու և կառավարական պաշտօնեաներու ըրած անտանելի չարութիւններէն։ Իրենց աղջիկներն ու ազաքը կը յափշտակուէին, շատերն բռնի մահմէտականութեան կ'առաջնորդուէին, իրենց արտերը, այգիները ու պարտէզները կը գրաւուէին, եկեղեցիները կը սրբապղծուէին, իրենց տներն իսկ ազատ չէին դիմեալ աւազակներու և տուրք հաւաքող զինուորներու աւարառութենէն, այդ աւազակներն ու զինուորները ամենէն գեղեցիկ հարսերուն ու կոյսերուն պատիւը կը բռնաբարէին անպատիժ։ Կառավարութիւնը բանտի, տուգանքի և երբեմն իսկ մահու սպառնալիքով արգիլած էր Հայերու զէնք կրել. մինչդեռ մահմէտականները յոտից ցկլուխ զինեալ արձակ համարձակ կը շրջէին։ Վայ եկած էր Հայերուն եթէ դիմադրէին և կամ բողոքէին տեղական իշխանութեանց, ոչ միայն իրենց դատը չէր լսուեր, այլ, բանտի, տուգանքի և ծեծի կ'ենթարկուէին. . . . Շատ անգամներ քիւրտերը կամ կառավարութեան պաշտօնեաները գիւղերը կը շրջէին տուրք հաւաքելու (Թուրք կառավարութենէն զատ քիւրտերն ալ Հայերէն տուրք կը հաւաքեն) և հնարադանաբաշխման անընդհատ խնդրանքներով ու ցոփութիւնով ամիսներ կ'անցնի. . . . .

Կ. Պոլսոյ Ազգ. Ընդհ. ժողովը 1870ի երկար քննութենէ յետոյ այս անտանելի հարստահարութեանց համար համարձակեցաւ տեղեկագիր մը տալ Թուրք կառավարութեան։

ՀԱՅԿԱԿԱՆ ՁԻՆԱՆՇԱՆ

ԿԱՄ

ՆՇԱՆԱԿՔ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ

Մեր Պատ. ընթերցողաց ինչպէս յայտնի է, մեր ընկերներէն Պ. Ներսիսեանց ձեռնարկեց Հայաստանի փառաց այս հին յիշատակը ի լոյս ընծայել, որ վիմագրական մամլի տակ կը գտնուի. արդէն երկու գոյները վիմագրուած են։

Հրատարակութեան նպատակը շահագործել չէ. այլ մեր բարեկամը կարևոր գումար մը ծախսելով կ'ուզէ թէ՝ ազգային պարտականութիւն մը կատարել և թէ՝ արտադրեալ գումարին մէկ մասը Թերթիս պակաս տառերու ամբողջացման ծառայեցնել։ Զարմանալի չէ՞ որ այսպիսի փոքր գործ մը իսկ այսօր կ'ունենայ իր նախանձ թշնամին՝ որ Եգիպտոսէն կը գրէ թէ՝ «այս գործէն ձեռնթափ եղիք եթէ չէք ուզեր Նիւթապէս վնասուիլ», որովհետև ինք սկսած է։ Կ'երևի թէ այս պարոնը քանի մը գոյներով անկատար գործ մը կ'ուզէ հրապարակ բերել միայն մեզ վնաս հասցնելու դիտումով։

Ուստի ամէն անոնք՝ որ կը փափագին ունենալ նրբաճաշակ և կատարելագործեալ ՀԱՅԿԱԿԱՆ ՁԻՆԱՆՇԱՆ մը, պէտք է ամիս մըն ալ համբերեն և ստանան գործ մը զոր միչև այսօր տեսնուած չէ մեր մէջ, որ խիստ ընդարձակ և ամենաընտիր mat թղթի վրայ վիմագրուած է, որուն իւրաքանչիւր օրինակի թուղթը միայն կ'արժէ 50 սանթիմ։

ԱՅԼ ԵՒ ԱՅԼՔ

Գաղղիացի Անթուան անուն յեղափոխական երիտասարդ (*) մը յունօ-թրքական պատերազմի ժամանակ Բարիզէն 20 հայ, 20 կրետացի և 20 գաղղիացի կամաւորներով Ցունաստան եկաւ, որուն հետ տեսնուեցանք և հարցուցինք թէ՝ ինչ գաղափար ունի Հայ ազգին և յեղափոխութեան վրայ։ Պ. Անթուան հետեւեալը պատասխանեց մեզ։

«Հայութիւնը իր տաղանդով և »աչխատասիրութեամբ բոլոր ազգե»րու համակրանաց արժանացող և »ազատութեան արժանի ազգ մըն »է։ Հայ ժողովուրդը ինչպէս ըն»դունակ է կրթութեան և քաղա»քավարութեան, այնպէս ալ յե»ղափոխականութեան, բայց ցաւալի »է ըսել թէ ո՛չ գլուխ ունի և ոչ ալ »գիւանագիտութեան հմուտ ղեկա»վարներ։ Ձեր քօմիթէները՝ որ կէս »գոյութիւն ունին՝ իրենց ջանքերն »ու գործերը այնչափ տկար են, »որ դժբաղդաբար չեն համապա»տասխաներ ազատութեան այն բա»ձրը գործին,—զոր դուք կը բաղ»ձաք.— որովհետև անոնց մէջ կը »տեսնուի տարօրինակ ատելութիւն »մը, նախանձ մը։ Թէ՝ ինչ է »անոնց ներքին կռիւներու շար»ժառիթը, այդ անծանօթ է մեզ։

»Այս առթիւ օրինակ մը ցոյց »տամ ձեզ։ Երբ Եւրոպա կը գտ»նուէի, հեռաքրքրուեցայ այցելու»թիւն մը տալ հայ քօմիթէներու »կեդրոններուն, որովհետև նպատակ »ունէի Հայաստան մտնել իմ ըն»կերներով, կարծելով թէ պիտի »տեսնէի զօրաւոր քօմիթէ մը։ Երբ »Լոնտոն հասայ. նախ այցելեցի »Նազարբէկ անուն մարդուն, և »փափաքս յայտնեցի անոր։ Այս »պարոնը խոստացաւ զիս ուղած »տեղս ղրկել, պայմանաւ որ իր »բաշխօրթով մտնեմ երկիր, որ»պէս թէ՝ եթէ տարբեր կուսակ»ցութեան մը անունով երթամ չը »պիտի ընդունուիմ և միևնոյն ժա»մանակ կեանքս վտանգի պիտի »ենթարկուի։ Լոնտոնէն հեռանա»լով Ժընէվ գնացի. ուր գտայ «Դաշնակցական ըսուած կեդրոնը, »որուն անդամներուն հետ երկար »տեսակցելէ յետոյ նպատակս հաս»կըցուցի։ Անոնցմէ ալ գրեթէ մի»ևնոյն պատասխանը առի, տար»բերութիւնը սա էր միայն թէ »մեր առաջարկած գործին ժամա»նակը դեռ հասած չէ եղեր, հե»տևապէս քիչ մըն ալ համբերենք։ »Ժընէվէն հեռանալէս յետոյ Լոն»տոն և Բարիզ տեսնուեցայ Պ. »Արփիարի և Պ. Աղասիի հետ։ Առաջինը խոստացաւ մեծ գործեր. »արդէն իրենց նպատակն ալ այդ »ըլլալը բացատրեց. սակայն դեռ «կազմակերպուած չըլլալով ժամա»նակ մը սպասել պէտք է եղեր։ »Իսկ վերջինը կարծես թէ այդ եր»կրին բուն թագաւորը ինքն ե»ղած և միչտ ինքը պիտի մնայ, »յորմէ՞ հետևեալ պատասխանը ըս»տացայ։ «Այդ գործը, զոր ըս»կիզբէն ես ստանձնած էի, պիտի »ջանամ ի գլուխ հանել և պիտի »յաջողիմ. սակայն երբ այդ օրը »ներկայանայ մեզ, այն ատեն մի»այն կրնամ հրաւիրել զձեզ»։

»Երբ Ձեր քօմիթէներուն սա »տարօրինակ ընթացքը տեսայ, յու»սակուր վերադարձայ և որոշեցի »Ցունաստան գալ։ Ցաւալի է խոս»տովանիլ այս իրողութիւնը թէ՝ »ուր որ գացի, Հայ ազգի նկատ»մամբ բարեկամաց կողմէ եղած »հարցմանց՝ ըստ անհատական հա»մոզմանս պատասխանեցի։ Ազգ մը »տակաւին ազատութիւն ձեռք չբե»րած ունի իր մէջ քանի՞ մն թա»գաւորութիւններ»։

ՈՒՆԿՆԴԻՐ ՎԿԱՅ ՄԸ

Մեր Բարիզի ընկեր Պ. Գաղատացի՝ յանձնարարած է մեզ ըզգուշացնել հայերը Լեւոն Գոչունեան ըսուած խաչագողէն, որուն խարդախութիւնները Շիշմովայի մեր թղթակիցը պարզած էր «Միութիւն»ի 11րդ թուին մէջ։

Պ. Գաղատացի տեղւոյն Բարեգործական ընկերութենէն 50 ֆրանք ստանալով կը ղրկէ Վառնա Գոչունեանի հասցէին, որպէս զի յանձնէ Գ, Տ.ի, որ հիւանդանոցի մէջ նիւթապէս և ֆիզիքապէս կը տառապէր։ Կեղտոտ խաչագողը, յիշեալ գումարը ստանալէն յետոյ. ուրիշ քանի մը հայերէ ալ բաւական դրամ շորթելով Ռուսճուք փախեր է։

Բարիզի «Արծիւ Պաշտպան Հայրենեաց» միութիւնը կը խնդրէ մեզ ծանուցանել թէ՝ իր մինչեւ ցարդ հանգանակած 2090 ֆրանքի գումարը, գործածած է մի՛ ազգօգուտ նպատակի համար։

«Լը Քոմպա»ի խմբագրութիւնը Ժընէվ փոխադրուեցաւ, ուր պիտի շարունակէ հրատարակութիւնը 3րդ թիւէն սկսեալ։ Ա. ժամանարեայ հասցէն է։ Խ. Պէլք-բոսթ-Ռէսթանթ Ժընէվ (Սիւիս)։

(*) Այս երիտասարդը հայասէր և զարգացած յեղափոխական մըն է, Հայկական խնդրոյ առթիւ գաղղիերէն լեզուով հրատարակութիւն մը ալ ունի,

Ամերիկայի Լօրէնս քաղաքէն ձեռքերնիս հասած «Շաւարշ» ստորագրութիւն կրող նամակ մը կը քննադատէ տեղւոյն «Հայ Երիտ. Միութիւն» ընկերութեան անդամներու վարմունքը, և կ'ըսէ «ընկերութիւնը ո՛չ յառաջդիմած է և ոչ ալ իրմէ սպասուած արդիւնքը ունեցած է, որովհետև անդամները անփորձ և անընդունակ երիտասարդներ ըլլալով՝ փոխանակ գործին զարկ տալու և նոր անդամներ աւելցնելու, կ'ուզեն թերթերը խրենցմով դադրեցնել»։

Մենք խորհուրդ կուտանք մեր Պ. նամակագրին, որ փոխանակ ի հեռուստ դանդատելու և քննադատելու ինքն ալ աջակցի և անոնց թերութիւնները ուղղէ, որով փոխանակ ընկերութեան գոյութիւնը վտանգելու, անոր բուռն զարկ մը տրուած կ'ըլլայ։

Անցեալ տարի Լոնտոնի մէջ ոպանուող՝ խարբերդցի Նիկողոսի որդին, կը խնդրէ մեր պատ. Ազգայիններէն թէ ամեն անոնք որ գիտեն իր խեղճ հօր ինչպէս ըսպաննուիլը և եթէ ունին ո՛ր և է տեղեկութիւն անոր դատի մասին թող հաճին գրել հետեւեալ հասցէին.

K. G. Gochgagarian
P. O. Box 35
Madisson maine u. s. a.

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

ՄԻՍԻՈՆԱՐՆԵՐՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԷՆ ԱՐՏԱՔՍՈՒՄԸ.— Լոնտոնէն կը հեռագրեն թէ՝ Բ. Դուռը կը պնդէ մեծ տէրութեանց ընդունիլ տալ հեռացնել Թուրքիայէ այն միսիոնարները, որոնք Հալէպի և ուրիշ հայաբնակ գաւառներու մէջ հաստատուած՝ վերջին կոտորածներէ թշուառացեալ հայ կարօտելոց նպաստներ կը բաշխեն։

—o—

Կ. ՊՈԼՍԷՆ կը հեռագրեն թէ՝ հայ յեղափոխականները վերստին սկսած են պատրաստուիլ նոր շարժում մը ընել։ Առ այս Բարիզի, Լոնտոնի և Ժընէվի ոստիկանական տեսչութիւնները խմացուցած են տաճիկ ոստիկանութեան որպէս զի լուրջ միջոցներ ձեռք առնէ։

—o—

ԼՐՏԵՍ ՄԸ. Նիկոսիա (Կիպրոս) քաղաքը հասած է վերջերս 45 տարեկան, միջահասակ, խիստ մօրուքով և թիւգոյն Սուքիաս (կեղծ անուն Աւետիս) Պոյաճեան անուն վատ անձ մը։ Այս մարդիկը յատուկ պաշտօնով ղրկուած է եղեր տեղւոյն հայերուն շարժումները և անոնց գործերը լրտեսելու համար։ Բարեբաղդաբար քանի մը հայեր զանազան ազգային թերթեր տալով իրեն հետամուտ եղած և յաջողած են գաղափարը չօչափելով ստուգել անոր վատութիւնը։ Առ այս Լառնաքայի ազգայնոց ժամանակին գրելով զգուշացուցած են այս փոքրոգի ալարածին դաւեբէն, որ երբ հասէ է Լառնաքա և ոչ մի հայ չէ մտեցած իրեն։

—Միևնոյն քաղաքէն կ'իմացնեն թէ՝ երեք հայ երիտասարդներ նիւթական տագնապէ նեղեալ մահմէտականութիւնը ընդունած են։

Ազգուրաց շահախնդիրները երբեք չխորհեցա՞ն թէ հայ ժողովրդի մեծամասնութիւնը այսօր միևնոյն թշուառ վիճակին ենթակայ է, մի՛այն իրե՞ք են եղեր։ Բայց վատը անպատճառ իր փառութիւնը կ'ընէ վաղ կամ անագան։

—o—

ՏԻԳՐԱՆԱԳԵՐՏԻ ազգայնոց վիճակը անտանելի դարձած է, հալածանքները տ՛յն աստիճան սաստկացած են որ իրեղ հայերը միչտ սարսափի մէջ են. խանութնին իսկ բանալու չեն համարձակիր, որովհետև թուրքերը և քիւրտերը վաճառք գնելու պատրուակով կը ներկայանան և առանց դրամը վճարելու ազատ համարձակ կ'անհետանան։ Ի զուր կը բողոքեն հայերը, որոնց իրաւունքը պաշտպանելու համար տեղական կառավարութիւնը՝ տեսական ձեւակերպութիւն մը իսկ չըներ յանցաւորները ձերբակալելու համար։

—o—

Ս. ՓԵԹԵՐՍԲՈՒՐԳԻ օսմ. դեսպանը տեղւոյն «Նովոյէ-Վրէմիա» թերթին հետեւեալ պաշտօնական լուրը հաղորդած է։

Սեբաստիոյ Նահանգին և Ֆէնիք գաւառին շրջականները քանի մը խումբ զինուած խռովարար հայեր, որոնք յեղափոխական քօմիթէի կը պատկանին, յարձակում ընելով մարթինի հրացաններով զամարդեր իսկ սպաննեցին. և տինամիթի ու պօմպայի ռումբերով մեծամեծ վնասներ հասուցին, և հասարակաց անդորրութիւնը վրդովեցին։ Առ այս Սեբաստիոյ վալիին հրամանաւ իբրև խռովութեանց հեղինակ և թելադրիչ ձերբակալուեցան Յովսէփ անուն մարդ մը և ուրիշ կին մը։ Կարգապահութիւնը վերահաստատուեցաւ։

—Առ այժմ Սեբաստիէն արժանահաւատ աղբիւրէ մը լուր չունինք, սակայն խորամանկ թրքերու այս պաշտօնական յայտարարութենէն կը հետեւցնենք թէ սրտաճմլիկ դէպքեր պատահած են։

—o—

ԼՈՆՏՈՆԷՆ կը հեռագրեն թէ Սեբաստիայի և Բաղէշի մէջ թրքերը մեծ կոտորածներ ընելու կը պատրաստուին։ Այս լուրը Եւրոպայի բոլոր երկիրներու մէջ տարածուած է։

—o—

ՍՈՒԼԹԱՆԱԿԱՆ իրաւէ մը կը հրամայէ 25000 զօրք համախմբել Սուրիոյ Ալեքսանդրէթ քաղաքին մէջ։ Այս առթիւ մեծ պետութեանց ոչ միայն կողմէն դիտողութիւն եղած չէ։

—o—

ԱՄՍՈՑՍ 13ը (բշ.) ձմեռուան առաջին օրն էր Աթէնքի համար, կարծես թէ յունուար ամսի մէջ էինք։ Պատերազմէն վերադարձող կամաւորները, որոնց մեծ մասը օտարականներ են, խեղճերը ցրտին սաստկութենէն խումբ մը կտրած անպատսպար կը շրջէին փողոցները։ Ասոնցմէ մէկ քանիները յանկարծ յարձակեցան քանի մը խանութներու վրայ և կիսով չափ կողոպտեցին բաւական հագուստներ, առով ալ չբաւականանալով ուրիշ խանութներ կողոպտելու փորձ ըրին։ Շուկային մէջ ոստրափը տիրեց, խանութները վայրկենապէս փակուեցան, բարեբաղդաբար ոստիկանութիւնը վրայ հասնելով յափշտակիչները ձերբակալեց, որով կարգը վերահաստատուեցաւ։

—o—

ՑՈՒՆՈ-ԹՐՔԱԿԱՆ պատերազմի խաղաղութեան վերջնական պայմանները կնքելու պաշտօն ունեցող ներկայացուցիչները սկսած են ժողով գումարել Թօփխանէ։ Կ'ըսուի թէ խնդրոյն վերջնական լուծումը չորս ամիսէն աւելի պիտի տեւէ։

—o—

ԹՈՒՐՔ կառավարութիւնը պատերազմի առթիւէն օգտուելով խաղաղութեան պայմաններու 11րդ յօդուածով կը պահանջէ Ցունաստանէն արգիլել Թուրքիոյ հասարակաց կարծիքը յեղաշրջող որ և հրատարակութիւններ, չհիւրասիրել այդտեսակ խռովարար անձեր երկրին մէջ։ Թուրքիոյ նպատակն է տեղւոյն հայ գաղթականութիւնը հալածել, եթէ յաջողի։

—o—

ՋԷԹԻՆԷՆ կը հեռագրեն թէ՝ Ալպանիոյ մէջ նոր խռովութիւններ ծագած են։ Տեղական իշխանութիւնը յուզումը զսպելու համար մեծ ջանքեր կ'ընէ եկեղեցիներուն դռները պահապան զօրքեր դրած է թուրքերու պատահական յարձակումէն պաշտպանելու համար։

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԱԶԴԵՐ

«Միութիւն»ի նախընթաց թիւին մէջ «Բանի մը խօսք Գանովասպանման առթիւ» յօդուածը որ «անիշխանականութեան» ջատագով կերպարանք ունէր, ներկայ պտրագաներու փափկութիւնը ի նկատի առնելով խոհեմութիւն համարեցինք շարունակութիւնը չհրատարակել։

Պուլկարիոյ և Ռումանիոյ նամակատուները՝ որովհետև Աթէնքի համար մանտա-բոսթ չեն ընդունիր, դրամ ղրկելու դիւրութեան համար կը խնդրենք Պուլկարիոյ մեր ազգայիններէն որ հաճին իրենց բաժնեգինը ղրկել ուղղակի մեր ներկայացուցչին հեռեւեալ հասցէին. Պ. Դաւնիկ Տէօքմէճեան ի Ռուսչուք (Պուլկարիա)։ Իսկ Ռումանիոյ բաժանորդները դիմեն Պ. Մ. Գրիգորեան, Գազարմա Բոմբէռիլօր Քէօսթէնճէ (Ռումանիա)։

Ամեն անոնք որ կ'ընդունին մեր թերթը և չեն ուզեր բաժանորդ գրուիլ, թող փութան անմիջապէս թերթը յետս վերադարձնել։

«Լը Քոմպա»ի խափանման՝ և կամքէ անկախ պատճառներէ հարկադրուած, «Միութիւն»ը իր ժամանակին ի լոյս չընծայնուցաւ։

Թերթիս հրատարակութեան օրէն սկսեալ այնքան նամակներ հասած են մեզ, որոնց պատասխանելու ժամանակ չմնալով անկարգութիւն պատահեցաւ և չկրցինք իրենց ժամանակին պատասխանել, որուն համար հրապարակաւ ներողութիւն կը խնդրենք և կը խոստանանք այսուհետև մեզ հասած նամակներուն ընդհանուր պատասխանել։

ՆԱՄԱԿԱՏՈՒՓ

ԲԱՐԻԶ.— Hom Arménien 123 Brd mout Parnasse, Ձեր հասցէն չէ գտնուած և թերթը վերադարձուած է։

ՖԻԼՊՈՒՐԿ.— (Ամերիկա) Պ. Մալիէմէրեան, շնորհակալութեամբ ստացած ենք Ձեր համակրալիր նամակը և բաժնեգինը։

ՊՈՄՊԷՅ.— (Հնդկստ.) Պ. Հայաստանցի Ձեր ղրկածները և մանաւանդ Ձեր նամակի պարունակութիւնը չափազանց ուրախացուց մեզ։

ՃՈՒՐՃՈՎԱ.— Վ. Խրիմեան մայիսի թիւը եթէ չէք ստացած ղրեցէք։

ՆԱՇՎԱ.— (Ամեր.) Պ. Գ. Աթուշարեանցի Ձեր թերթերը շաբունակաբար կը ղրկենք, ինչպէս չէք ստացած կը զարմանանք, որ թիւերը կը պակսի գրեցէք։

ՎԱՌՆԱ,— Պ. Զիչէքճեան դրամիդ պէտք է ղրկէք մեր ներկայացուցչին Պ. Գ. Տէօքմէճեանի Ռուսճուք։

ԼԻՄԱՍՈԼ.—(Կիպրոս) Յ. Յովսէփեան, դրամը Եգիպտոս ղրկելու հարկ չկայ, կրնաք ուղղակի մեր ներկայացուցչին ղրկել Յ. Յովսէփեան, Լառնաքա։

ՍՕՖԻԱ.— Պ. Մ. Մանուկեան, նամակդ շնորհակալութեամբ ստացած ենք։

ՇՈՐՆՏՕՐՖ.— (Գերմանիա) Պ. Գ. Աբրահամեան, քարտդ շնորհակալութեամբ ստացանք։ Մեր պարտականութիւնն է։

ՄՕԼՏԸՆ.— (Ամերիկ.) Գ. Սըրապ, Ձեր նամակը մեզ հասած չէ, նոր հասցէին կ'սկսինք շաբաթական ղրկել։

ՍԱՆԹԱԼ ՖԱԼ.— (Ամերիկ.) Ա. Ս. Մարութեան, ճիշդ տարի մըն է որ Փ. Օ. Պօքս 722 հասցէով կը ղրկենք թերթը, արդեօք չէ՞ իր ստանար. թէ վերջերս հասցէնիդ փոխած էք, գրեցէք մեզ։

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ՄԻՈՒԹԻՒՆ»ի
ԱԹԷՆՔ, ՀԱՅԿ. ԱԶԱՏ ՏՊԱՐԱՆ

Գործը ծանր էր այս վերջինին համար. նախ որ իր կրօնակիցները չէր ուզեր պատժել, կեանքերը նեղած լլլալնուն համար, երկրորդ որ անակնկալ յանդգնութիւն կը տեսնէր հայոց վրայ, որոնք հրապարակաւ. այսինքն ապստամբին բողոքի ձայն բարձրացնել կը վարժուէին, երրորդ որ այդ բողոքի ձայնին հիտեւանք ըլլալով Հայկական ապագայ ապստամբութեան մը կը վախնար։ Ուստի իր հնօրեայ քաղաքականութեան համաձայն բըլան մը գծեց Հայոց մասին։ Հրամայեց դատական քննութիւններ բանալ գաւառներու մէջ, յանցաւորները պատժելու համար։ Ամբաստանող հայերը բանտ տարուելով դատաւորներու առջև հանուեցան և ամբաստանեալները ցուցուելով հրաման եղաւ իրենց որ անոնց վերագրեալ ոճիրները վկաներով հաստատեն. եկ տես որ՝ վկաները մահմէտական ըլլալու էին, քանզի ըստ «Շէրի»ի մահմէտականի դէմ քրիստոնէի վկայութիւնը ընդունելի չէր, հետեւաբար ոճիրները չհաստատուեցան. հայերը իբրև կրպարտիչ դատական բոլոր ծախքերու վճարման ու բանտարկութեան դատապարտուեցան։ Կառավարութիւնը այսքանը բաւ չը համարելով՝ առաջնորդներէն և ժողովրդէն հանրագրեր պահանջեց. յայտարարող թէ առ հասարակ գոհ են կառավարական պաշտօնեաներէ և քիւրտերէ։ Հանրագիրը չստորագրող շատ մը եկեղեցականներ պաշտօնանկ եղան և տգին անգին աքսորուեցան . . . . . .

Բ. Դուռը այս հոնրագրերու ապաւինելով՝ յայտարարեց թէ Հայոց Պատրիարքարանի ներկայացուցած հարստահարութեանց տեղեկագրին պարունակութիւնը սուտ է։ Միւս կողմէ վարչական շրջանակներու (միթասարըֆլըգ) նոր սահմաններ հաստատեց, այնպէս որ հայերը ոչ մէկ տեղ մեծամասնութիւն չունենան վարչական շրջանակներու մէջ։

* * *

Էրզրումի վալին ծանուցեր էր Բ. Դրան թէ՝ պէտք է Հայոց Ներպաստաւոր ինչ ինչ բարեկարգութիւններ ընել. ապա թէ ոչ անոնք կը պատրաստուին Ռուսիա գաղթել։ «Թող գաղթեն. պատասխանած էր Եպարքոսը, և յայտարարած էր թէ կառավարութիւնը «անոնց տեղը չէրքէզներով պիտի լեցնէ»։ Այսպէս ալ և աւելին եղաւ. . . . . .

Հայերը չգաղթեցին, վասն զի Պոլսոյ Պատրիարքարանը յորդորեց զանոնք որ չթողուն հայրենի երկիրը և սպասեն բարեկարգութիւններուդ գործադրութեան։ Իսկ եթէ գանգթականութիւնը չեղաւ. պանդխտութիւնը սոսկալի համեմատութեամբ աւելցաւ, Թրքա-Հայաստան բնակող 2 միլիոն երիտասարդ հեռու տեղեր երթալով երկար տարիներ աշխատելու և շահած դրամներնի ամսագ հարկահաւաքներու, քիւրտերու և քիւրտերէն յետոյ եկող չէրքէզներու գրպանները լեցնել հարկադրուեցան, գրեթէ երիտասարդութիւն չմնաց գաւառներու մէջ, ծնողները նուազեցան ինչպէս և ամուսնութիւնները։ Մեծ քաղաքներու մէջ պանդխտող երիտասարդները, սկսան կորսնցնել ընտանի բարոյականը և անոր հետ իրենց առողջութիւնը ու կեանքը։ Ցաւալի է թէ Հայաստանի հայոց թիւը օր ըստ օրէ զգալի կերպիւ կը նուազէր։ Հայ ժողովուրդը ամենէն արագ աճող ցեղերէն մէկն է։ Ռուսիոյ մէջ 1836ին հայիւ 400,000 հայ կար, այսօր անոնց թիւը մէկ ու կէս միլիոնէ աւելի է, 170 տարի առաջ Հայաստանէն գաղթող 50 հայ ընտանիք եկած հաստատուած են Կ. Պոլսոյ մօտ քաղաք մը, Ռոտոսթօ։ Այսօր ասոնց թիւը 15 000ը կ'անցնի։ Պարտիզակ գիւղը, Նիկոմիդիոյ մօտ 40-50 հայ ընտանիք. իբր 300 անձ, հիմնած են զայն մէկ ու կէս դար առաջ, այսօր այդ զուտ հայաբնակ գիւղը 14,000 բնակիչ ունի, առանց դրսէն գաղթական ընդունելու. մինչդեռ շատ պարտիզակցի հայ ընտանիքներ այլ և այլ տեղեր գաղթած են։

* * *

Այժմ նկատեցէք որ Հայկական գաւառներու հայ բնակչութիւնը 25 տարուան մէջ 2 միլիոնէն մէկ ու կէս միլիոնի կամ գուցէ աւելի պակաս եղած է։ Ովկիանեան կղզիներու բնիկները և Ամերիկեան հնդիկներն անգամ այսքան արագ ջնջման ենթակայ չեն եղած։

Արդ՝ Բայնարճայէն մինչև Պերլինի դաշնագրին ստորագրուիլը հայերը կը տառապէին, կը հարստահարուէին, անձի կորուստներ կուտային, բայց իրենց բնաջինջ ըլլալը կը սկսի 1878էն ապէն։ Եւրոպա այդ թուականէն պաշտպան կեցաւ հայերուն, և 1883ին հայերը հանրային ջարդ մը կրեցան Էրզրումի մէջ։ 1884ին և 1887ին Վանի շուկան կրակի տրուեցաւ և հայերու բոլոր ստացուածքը աւարի տուին, յետոյ եկան զանազան ջարդեր, հրդեհներ որոնց հեղինակները չիրնտուեցան բնաւ։ Իսկ Սասունի ահռելի կոտորածն ու քանդումը քանի մը ժամուան գործ եղաւ. Երզնկայի բանակին զինուորներն ու քիւրտերը թնդանօթներով, հրացաններով ու նիզակներով զինեալ 12000 հայեր բնաջինջ ըրին։ Եւրոպա կարդաց այդ ջարդին մանրամասնութիւնը զոր հիւպատոսները տեղեկագրած էին։ Քիւրտերն ու զինուորները իրար գերազանցեցին խըժդժութեան մէջ. հարիւրաւոր յղի կիներու արգանդը ճեղքելով երախաները սուրերու և նիզակներու ծայրը անցուցած յաղթական անցք կատարեցին իրենց մեծերուն առջև։ Իրարի կամ կեղծ ամբողջ Եւրոպա սարսռաց, ցնցուեցաւ և պետութեանց դաշինքները քննութիւն բացին. հաստատուեցաւ որ Սասունի գաւառը անմարդի և մոխիր դարձած էր, գիւղերն այնպէս աւրուած էին որ անոնց հետքերը գտնելու համար շաբաթներով խուզարկութիւն կատարուեցաւ։ Յետոյ ի՞նչ եղաւ... յետոյ. . . Ստուգուեցաւ որ Ջարդը Սուլթանին հրամանով կատարուած է։ Կլատսթոն զայրացաւ, Պիզմարք ծխափայտը անգամ մը ալ վառեց, Կիյօմ խնդակցեցաւ Սուլթանին, Ռուսիա մէկ այս մէկ այն կողմը նայեցաւ. յուսալով որ Հայաստանը գրաւելու արտօնութիւն ձեռք կը բերէ, քաղինէները ժողով կազմած կոկորդիլոսի արցունք թափեցին Հայ ազգին կրած տառապանքներուն վրայ, և գործը վերջացաւ եղերերգական արարուածով։

Սուլթանը ջարդն հրամայած էր իր սիրելի քարտուղար Սիւրէյա փաշայի միջոցով. ան ալ իր անձնական լրջիկ Փէշտիմալճեան Տիգրան փաշայի, այս վերջինն ալ փութացած էր Պոլսոյ անգլիական դեսպանը իրազեկ ընելու։

Սըր Ֆիլիպ Փըրրի՝ Սուլթանին երեսն ի վեր գոչեց թէ ջարդին հրամանը Ն. Վեհափառութենէն բըղխած էր։ Սիւրէյա փաշա Սուլթանին առջև կանչուելով չկրցաւ ուրանալ գաղտնիքին ինք յայտնած ըլլալը։ Երկու օր յետոյ Սիւրէյա փաշա մեռած գտնուեցաւ իր անկողնին մէջ. իսկ Տքթ. Փէշտիմալճեան յանկարծամահ եղած էր երեք օր յետոյ, ահա Սասունի կոտորածին բոլոր արդիւնքը։

* * *

Բ. Դուռն ամեն միջոց բանեցուց հանդարտեցնելու համար Եւրոպայի գրգռուած հանրային կարծիքը և ի վեր հանելու համար Թուրքիոյ մասին պետութեանց իրարու հակառակ շահերը. լրագրութիւն և պետական-ն ազդեցիկ անձեր գրամով և ընծաներով Սուլթանին կողմն անցան։ Այսքանը բաւական չէր, պէտք էր հաստատել թէ ջարդ չէր եղածը, այլ խումբ մը ապստամբ հայերու ասպատակութիւնը խեղճ միւսլիմաններու դէմ։ Ամբողջ հայերու դէմ ղրպարտութեան վճիռ տրուելուն պէս դիւրին էր զանոնք խռովարար հռչակել, ուստի Մուսա-պէյի մը գատը հնարուեցաւ։ Այս գազանաբարոյ աւազակը շարունակեալ մարմնացումը եղած էր հայոց համար։ Մշոյ գաւառին մէջ, հիւպատոսները մատնանիշ ըրած էին զինքը։ Հայոց Պատրիարքը բարձրաձայն բողոքած էր, վասն զի Մուսա պէյ ամեն չարագործութենէ զատ, սովոր էր հայերը բռնել, բեգրոլով թրջել զգեստնին և այնպէս այրել։

Մուսա-պէյի գատը տեղի ունեցաւ Պոլսոյ մէջ, 50-60 թշուառ մշեցի հայեր Պոլիս եկած էին. իբր ամբաստանող ու վկայ, յետոյ ի՞նչ եղաւ։—Մուսա-պէյ անպարտ արձակուեցաւ և թուրք թերթերէն կառավարութեան հրամանով զովասանաց առարկայ եղաւ. իսկ հայերը հռչակուեցան խռովարար, գրպարտիչ, ապերախտ և այլն։ Սակայն Եւրոպա այսքան լրբութեան չհանդուրժեց և ստիպեց Սուլթանը՝ որ հարկադրուեցաւ Մուսա-պէյը հիճազ աքսորել։ Հայերը դարձեալ մնացին իրենց թշուառ վիճակին մէջ և աւելի վատթարացան, վասն զի կառավարութիւնը ոկսաւ իրենցմէ հաղարաւորները բանտարկել իբր ապստամբութեան հետամուտ, և այս եղաւ նոր միջոց մը հայերը կեղեքելու . . . . Ո և է պաշտօնեայ, ո և է մահմէտական, իրաւունք ունի ամբաստանելու հայ մը, թէ ապրստամբութեան կարծիք ունի և հետեւանքը կ'ըլլայ կամ տարիներով բանտարկութիւն կամ կաշառքով ազատիլ։

Այս ամենուն դէմ բողոքելու և գարման խնդրելու համար Պոլսոյ հայերը, 1890ին 4,000 հոգի հաւաքելով պատրիարքական եկեղեցին և պատրիարքը իրենց հետ առնելով ճամբայ ելան Բ. Դուռը երթալու։ Հաղիւ ճամբուն քառորդ մասը յառաջացած էին, զօրքերը անոնց վրայ յարձակեցան. հարիւրաւորներ սպանեցին, շատերը ձերբակալեցին և մնացեալները ցրուեցին, ձերբակալուածներուն մէկ մասը տանջանքներու տակ մեռաւ և մնացեալները զինուորական ատենի առջև դատուեցան։

Դեսպանները անզօր մնացին։ Սուլթանը տեսնելով Եւրոպայի տրկարութիւնը, փութաց առիթէն օգտուիլ և Հայկական խնդիրը հայու արիւնի մէջ խեղդել. . . . . բայց պէտք էր վարպետութեամբ գործել։

* * *

Բարեկարգութիւն գործադրելու պաշտօնով Շաքիր փաշան Հայաստան դրկուեցաւ։ Շաքիր փաշա՝ Տրապիզոն գնաց և անկից հեռանալէն քանի մը օր յետոյ Տրապիզոնի հայերը ջարդուեցան ու գոյքերնին աւարի տրուեցաւ։ Էրզրումի հառաջ, ուր քանի մը օրէն տեղի ունեցաւ ընդհանուր ջարդ և աւարարութիւն։ Շաքիր փաշա բարեկարգելու պաշտօնով շրջեցաւ Բաղէշ, Խարբերդ. Տիգրանակերտ, Սեբաստիա և այլն և այլն շատ քաղաքներ, թուով 40էն աւելի և բոլոր այդ քաղաքներուն մէջ, իրենց չընչաչկայ հայաբնակ հազարաւոր գեղերով, հայոց դէմ ջարդեր և աւարարութիւններ ու հրդեհներ տեղի ունեցան, (ո՛չ Վէբռ Սիսիլն, ո՛չ Սէնթ-Պարթէլըմի, և ոչ այլ կոտորածներ ընդհանրականութեան և խժդժութեան մասին կրնան հաւասարիլ Հայկական կոտորածներուն)։

Պատրիարքարան ղրկուած մանրամասն տեղեկութիւններ կը ծանուցանեն՝ 174,826 հոգի ջարդուած են, 10.000էն աւելի բռնի մահմէտականացած և 600 միլիոն ֆրանքի հարստութիւն կողոպտուած։ Այսօր Հայաստանի մէջ 70,000 որբ տըղայք կան մեծաւմասամբ անպատսպար, զոր կառավարութիւնը չը թոյլատրեր ուրիշ տեղ փոխադրել, այսօր Հայաստան անճանաչ երկիր մըն է. անթիւ գեղեր այրուած ու ամայացած, եկեղեցիներ, դպրոցներ ու վանքեր քայքայած, կործանած ամեն տեղ մեռելութիւն և ամայութիւն կը տիրէ. . . . . .

Բ. Դուռը հաստատեց կոտորածները. յայտարարեց թէ հայերը միւսիւլմանները ջարդեր, աւարեր և անոնց մզկիթներն ու դպրոցները կործաներ են. . . և հանգանակութիւն ըրաւ այս վերջիններուն համար և հայերէն նուէր հաւաքեց։ Եւրոպա լսեց, տեսաւ ու լռեց. . . Սուլթանը պահանջեց նաև որ Պոլսոյ հայերը դատապարտեն գաւառացի հայերուն վարմունքը ու անոնց ոճիրները, և հանրագրեր ստորագրել տուաւ անոնց։ Ի զուր հայերը, Պոլիս Բ. Դրան առջև երթալով խաղաղ ցոյց մը ըրին և դարման խնդրեցին երկու տարի առաջ։ Զինուորական խմբեր յարձակեցան վրանին և ջարդեցին զիրենք, բանտարկեալներու թիւը 15 հազարի բարձրացաւ, Ֆրանսայի դեսպանը ի զուր բողոքեց Ֆրանսացի քանի մը կրօնաւորներու ջարդին համար, ի վերջոյ լռել ստիպուեցաւ, վասն զի Ռուսիա այդպիսի խնդիր յարուցանելու տրամադիր չէր, Գերմանիոյ կայսրը Սուլթանին ջերմ բարեկամն էր, Անգլիա՝ Հայկական խնդիրը պասրուակ բռնելով Եգիպտոսը մարսելու կը զբաղէր։ Հայերը, մանաւանդ յեղափոխականները, տեսան որ իրենց ազդեցութիւնը բնաջինջ կ'ըլլայ եթէ Թուրք կառավարութեան նպատակն է, այս նպատակը ծնունդ առած է Եւրոպական դահլիճներու անբարոյական ու անոզոք շահախնդրութենէն, գէմութենէն ու նախանձէն։ Այս կարծիքը հայոց անխախտ հաւատքն եղաւ և նոյնն է այս ժամուս։ Ուստի անոնք որ կորուսին իրենց հայրը, մայրը, կինը, զաւակները, եղբայրներն ու քոյրերը յափշտակուած տեսան իրենց դոյքն ու տունը, արան ու այգին, բրոնաբարուած զգացին իրենց կրօնքը, եկեղեցին ու դպրոցը... անոնք ոչինչ շունին այլեւս աշխարհի վրայ, բայց եթէ թշուառ կեանք մը . . . անոնք որ մէկ ժամէն միւսը ենթակայ են ձերբակալման, որու հետեւանքը պիտի ըլլայ իրենց մահը։ Ի՞նչ կ'զգան իրենց այս վիճակին հեղինակներուն դէմ, վրէժխնդրութիւն . . . . . .

Attentat (ոճիրը) հայոց վրայ կը գործուի 20 տարիէ ի վեր։ Եւ ի՞նչ կ'ընէին Պ. Մուրավիէֆ, Պ. Հանօթօ, Պ. Հօհէնլօհէ և այլք, եթէ Թուրքն իրենց դէմ ըներ մէկ հարիւրերորդը այն բաներուն զոր հայոց դէմ կ'ընէ անպատիժ։ Բայց Թուրքը ինքնին ոչինչ կ'ընէր. եթէ Եւրոպայի դահլիճները իրենց ներկայ դիրքով չքաջալերէին զինքը, սրեմն առաջին մեծ ոճրագործը Եւրոպան է, որ հայ ազգին ջնջումը վճռեց։

Եթէ հայ յեղափոխականները անցեալ տարի Օսմ. Պանքան մըտնելով՝ դարձեալ խնայեցին հոն գտնուող 200 եւրոպացիներու կեանցը և 500 միլիոնի եւրոպական դրամագլխին։ Եւրոպա ի փոխարէն անտարբեր հանդիսատես եղաւ, նոյն դէպքին անմիջապէս յետոյ Պոլսոյ մէջ կատարուած 7,000 հայոց ջարդին։

Եւրոպա Թուրք կառավարութեան չափ և գուցէ աւելի եղեռնագործ է Հայկական դատին մէջ. երբ չփութաց քաւել իր մեղքը վրէժ պիտի լուծուի իրմէն ամեն ինչ կորսնցնելէ յետոյ, իր կեանքէն զզուած հայը պիտի լուծէ այդ վրէժը և բացարձակ արդարութիւնը, երբեք պիտի չըսե թէ այդ վրիժառութիւնը ոճիր էր . . . . . .

Չկայ աշխարհի վրայ ազգ մը, որ հայոց չափ ենթարկուած ըլլայ սպառման վտանգի։ Ամերիկայի գերիները մեկի բազատամբ երջանիկ էին, մինչ հայերս 13 դար մահմէտականներու մէջ կրցանք ապրիլ և երբ Եւրոպան իր ձեռքը դրաւ մեր վրայ, այն օրէն սկսանք ոչընչանալ։—Ի՞նչ է յանցաւորը—։ Աւելին կայ, մեր բնաջինջ ըլլալէն Եւրոպա կը վուխայ ժամ առաջ օգտուիլ, ուր որ հայ մը կը պակսի Պոլսոյ մէջ. եւրոպացի մը կը հաստատուի հոն, գերմանացիք միւսներէն աւելի փութկոտ են այս մասին։ Թուրք կառավարութիւնը անշուշտ հաշտ աչօք չդիտեր Թուրքիոյ մէջ եւրոպացւոց այսքան շատնալը, բայց անոնց ներքին հակառակութեան մէջքան լաւ տեղեակ է որ, վստահութեամբ կը սպասէ յարմար առիթին՝ հետզհետէ զանոնք վռնտելու համար. . .

Սուլթան Համիտի մեծ նպատակն է ընդհ. մահմէտականութիւնը իր դրօշակին ներքև համախմբել և ապականած. ներքին ազատ շահերու պատճառով բաժնուած քրիստոնեայ Եւրոպան սարսափեցնել օր մը. արդէն այդ Եւրոպան իր մոգական գաւազանին առջև ծունր չոքած է, նա գիտէ թէ մարդասիրութիւն, առաքինութիւն, պատիւ, ասպետական անձնուիրութիւն դահլիճներու քաղաքագէտներու բերանին մէջ համիմաստ նշանակութիւն ունին. իր ոսկիները աւելի գործ կը տեսնեն քան չարչարուող ժողովուրդներու լայն ու քրիստոնէութեան պահանջումները, ուստի Սուլթանը միշտ յառաջ կը վարէ Հայոց ջնջումը, միւսիւմաններու գրգռումը։ Թուրքիի վերջին դէպքը, ուր 870 հոգի ջարդուեցան, ցոյց տուաւ թէ որքան իրաւացի ենք, երբ Եւրոպայի դատապարտելի ու անբարոյական տըկարութիւնը երեւան կը բերենք։ Այդ ջարդին վրայ դեսպանները բողոքեցին, անմիջապէս քննիչներ ղրկուեցան հոն, քննութիւն կատարուելով՝ 48 թուրք մահուան և 3-400 ալ զանազան պայմանաժամով բանի ազատութեան դատապարտուելով բանտարկուեցան։ Սուլթանը այս իմանալուն պէս ներում շնորհեց ամենուն ալ. . . ու Եւրոպա լռեց . . . . . .

Ասոր վրայ էր որ տեղի ունեցան Պանքայի և Բ. Դրան վերջին դէպքերը։ Ըսէք հիմա թէ attentat ո՞վ գործեց։

* * *

«Մէշվէրէթ»ի դատաստանն ու դատավճիռը հրատարակած էիք, մենք կը տեսնենք Ֆրանսական բարոյականին կրած մեծ ու ազնիւ անկումը։ «Մէշվէրէթ» արժանի էր ո և է դատապարտութեան, ի՞նչ ըսած էը նա, թէ Սուլթանը մարդասպան, արիւնարբու, գազանաբարոյ է, այդպէս ըսողը նոյն իսկ դատական ծախքերու դատապարտելը կը նշանակէ թէ Սուլթանին չըլլածն իրեն վերագրուած է, արդ՝ Սուլթանը հարիւր հազարներով մարդ սպաննած է։—Այո կ'ըսէ Ֆրանսական կառավարութիւնը, Ֆրանսական դատարան մը առանց կաշառուած ըլլալու չէր կարող Սուլթանը արդարացնել։ Ամո՛թ, ամո՛թ, Ֆրանսայի դատական արդարութեան համբաւին . . . . . .

Եւ բարեմիտ Ֆրանսացիք կը ծափահարեն «Մէշվէրէթ»ի բացարձակ անպարտ արձակումը,—Մուսա-պէյի անպարտ արձակման հակահարուածը պիտի ըլլար։

«Մէշվէրէթ»ի միւսիւլման խմբագիրները չէ՞ որ պաշտպանել կ'ուզենք, իրենց պարագլուխը Մուրատ-պէյ՝ ցոյց տուաւ թէ մահմէտականները ի՞նչպէս կ'ըմբռնեն հայրենասիրութիւնն ու ազատամտութիւնը։ Մուրատ պէյ եռանդուն յեղափոխական մը ըլլալէ յետոյ, այս օր Պոլիս եկած ամսական 300 ոսկի կ'ընդունի Սուլթանէն, մի առ մի կը մատնէ այն մարդիկն, որ իր փախուստէն յետոյ համակրական յարաբերութիւններ ունեցած էին հետը։ Ո՜հ, ոսկի՛ ոսկի, ապականարար տարր, որուն առջև կիյօմ անգամ կը խոնարհի և Հանօթօ ի ծունր կ'ելնէ, Մուրատներ և իր նմաններ մատնութիւն ընելէ չեն գարձիր։ Սուլթան Համիտ իր միլիառներուն շնորհիւ աշխարհի հրզորները պիտի կրնայ իր նպատակին ծառայեցնել . . . . . .

Tous cochons et compagnie . . . . . .

* * *

Կ. ՊՈԼԻՍ

15 սեպտեմբեր 1897

Դրօշակեանները վերջին պոմպերու պայթումը տուաւ դարձեալ բաւական թուով զոհեր յեղափոխական դասակարգէն, որոնց թիւը 50ը կ'անցնի։ Այդ անձնուրաց և կարևոր գործիչներու եղերերգական կրուստը անհունապէս մորմոքեց մեր սիրտը, որ այդ թանկագին անձնաւորութիւնները յումպէտս զոհուեցան, սխալ և կամակոր վարչութեան մը քմահին ուղղութեանը, դա խայտառակութիւն է, ո՛չ թէ յեղափոխութիւն, հայ ժողովրդի պահանջածը ասոնք չէ։

Ձերբակալուած Դրօշակեաններու 12 կարևոր գործիչները մահուան դատապարտուեցան, որոնցմէ մէկ քանին բանտին մէջ սպաննուած են, անկարելի է նոյն իսկ երևակայել այն տանջանքները. զոր կը հնարէ իսլամական Ղուրանի անգութ հանճարը . . . . . Քրիստոնեայ Եւրոպան՝ սառնասիրտ ու անտարբեր կը դիտէ հայերուս եղերերգական վիճակը, ամո՞թ իրենց որ յայտնի և թագուն կերպով կ'օգնեն բարբարոս Թուրքին հայ տարրը ոչնչացնելու։

Վերջին ցոյցը՝ փոխանակ Եւրոպայի ուշադրութիւնը զօրաւոր կերպով հրաւիրելու մեր դատին վրայ ,հակահարուածը տուաւ անոր ու յետս ընկրկեց։ Եւրոպա՝ ամբողջ հայերս անիչխանական խռովարարներ հռչակելէ յետոյ, Սուլթանը կ'արդարացնէ իր ոճիրներուն մէջ։

* * *

Օրմանեան Պատրիարքը, Սուլթանին ստրուկ ազախինը դարձած, յեղափոխականներու դէմ հակառակորդի դեր կը կատարէ, մի քանի անգամներ գիմում ընելով Սուլթանին՝ յանձաւորաց պատժուիլն և անմեղներու արձակումը խնդրեց, ուսկից Սուլթանը գոհ մնալով, հրամայեց բանտարկեալ հայերու քննութիւնը կատարել։ Պատրիարք սրբազանը՝ կառավարութեան առջև երաշխաւորած է պոլսեցի հայերուն միայն— որով Օրմանեան Պատրիարքը կ'ուզէ հաստատել թէ՝ գաւառացիներն են յեղափոխականները և պէտք չէ որ Պոլսոյ մէջ մնան։

* * *

Սեպտեմբեր 7, կիրակի օր՝ Օրմանեան Պատրիարքը Պոլսոյ բոլոր եկեղեցիներուն մէջ (անշուշտ գաւառներն ալ) չրջաբերական մը կարդացնել տուաւ. որուն մէջ կը խրատէր ժողովուրդը սասաելով՝ «ի հաւատարմութիւն և ի հնազանդութիւն» և կ'անիծէր կը նզովէր բոլոր յեղափոխականներն ու անոնց հետևողները։ Հայկական եկեղեցւոյ վեհ սրբութիւնը՝ իր մէջ տեղի ունեցած այս լրբութեան ու սրբապղծութեան դէմ զայրացած կը թուէր։

Օրմանեան և Աշըքեան իրարմէ երբե՛ք տարբերութիւն չունին։ Այս երկու արմաշականներն ալ փառքի գողեր ու բախտախնդիրներ են, մինը՝ միւսէն գերազանց, եթէ Քրիստոս այս պահուս աշխարհի մէջ եղած ըլլար, պիտի դուշէր զայրացած, «Ցունն իմ տուն աղօթից կոչեսցի և դուք արարէք այրս աւազակաց։»

Մեծ-աղաներն ու տաճիկ-հայերը գոհ և ուրախ են, ասպարէզը իրենցն է հիմայ—հացկրնուն վրայ եղ քսուեցաւ,— բայց սա ալ չմոռնանք թէ՝ ամէն գործի վախճանը գովելի է . . . . .

* * *

Ազգապաշտ Նուբարը դեռ անպատիժ կը շարունակէ իր շահատակութիւնները, Թուրքօ-հելլենական պատերազմին չքանչանն ալ աւելցաւ իր պատուանշաններուն վրայ։

—Անցեալները Իւսկիւտար մեկնող շոգենաւին մէջ երկու հայեր երբ իրարու հետ մայրենի լեզուով կը խօսէին, Թուրք հարիւրապետ մը ռէվոլվէրը քաշելով երկու խօսակիցները շոգենաւին մէջ կը զարնէ։

Ոճրագործ զինուորականը երբ դատարանը կը տանին. հարցաքննութեան մէջ կը պատասխանէ. «ի՞նչ ըսելէ տէօվլէթի մայրաքաղաքին մէջ կեավուրճա կը խօսին. ես ալ չկրնալով համբերել սպաննեցի այդ կեավուրները»։ Դատարանը՝ խենթ կը հռչակէ ոճրագործը և ազատ կ'արձակէ զայն։

—Նախընթաց օր 32 հայեր այլ և այլ աքսորավայրեր ղրկուեցան։ Պոլսոյ մէջ սարսափը տիրած է, տնտեսական տագնապը և անգործութիւնը կը շարունակուի։

Օրմանեան Պատրիարքը թող շարունակէ իր շնորհակալութեան ուղերձներն ու Սուլթանին փառաբանութիւնները թէ՝ հայերը գոհ են Թուրք կառավարութենէն։ Այժմ ազգին ներկայ տառապանքին վիճակը տեսնող ամեն ճշմարիտ հայ կը խորշի դինքը Պատրիարք ընդունելէ, մինթէ իրաւունք չո՞ւնի։

Ցարգանք և երկրպագութիւն վսեմ ձգտումներու տէր և անձնուէր ժողովրդապետի մը, այդ միակ անձը Իզմիրլեան քաջարի Պատրիարքն էր «հովիւ քաջ զանձն իւր դնէ ի վերայ ոչխարաց։

Այս ներկայ կացութիւնս ի նկատի առնելով՝ զգաստանանք, ամփոփուինք մեր մէջ, ճանչնանք մեր թերութիւններն ու ուժերը և ըստ այնմ շարժինք ցուցամոլութիւնը զմեզ կործանեց։ Ներքին այժ կարելի է գոյացնել միայն և միայն «հարազատ միութեամբ»։

ԿԱՐՕ

ՆԱՄԱԿ ԱՄԵՐԻԿԱՅԷՆ

ՈՒՍՏՐ, 26 Սեպտեմբեր

«Միութիւն»ի ընթերցողներուն յայտնի է արդէն Լօրէնսի ազգայնոց կազմած յանձնախումբը, որ պաշտօն ստանձնած էր բանակցելու Հնչակեան կեդր. Վարչութեան և Դաշնակցութեան Պիւռօին հետ՝ միութիւն գոյացնելու համար։

Հայ հասարակութեան մեծամասնութիւնը, որ արդէն միութեան ջերմ փափաքող է, անտարակոյս կը փափաքի գիտնալ թէ ի՞նչ արդիւք ունեցաւ Ցանձնախմբի բանակցութիւնները և ո՞ւր յանգեցան։

Ցանձնախումբը՝ ըստ իր կոչման, նամակներ գրեց Հնչակեան Նորակազմ Վարչութեան ի Լոնտոն և Դաշնակցութեան Պիւռօին ի Ժընէվ ու միութիւն առաջարկեց անոնց։ Առաջինը՝ փութով պատասխանեց, փափաք յայտնելով ժամ առաջ անոր գործադրութեան։ Այս գոհացուցիչ պատասխանը անմիջապէս հաղորդուեցաւ Ցանձնախումբը ընտրող հասարակութեան։

Դաշնակց. Պիւռօն՝ յանձնախմբի նամակին պատասխանելը 3 ամիս պայմանաժամով յետաձգած էր բայց մինչև ցարդ ո՛և է պատասխան չտրուեցաւ։ Ցանձնախումբը՝ տեսնելով որ որոշեալ պայմանաժամէն երկու ամիս ալ անցած է և 5 ամիս առաջ յանուն ժողովրդի ըրած դիմումը անլսելի մնաց, ստիպուեցաւ իր հրաժարականը տալ։

Ահա այսպէս Լօրէնսի հայոց ընտրած Ցանձնախումբը՝ 6 ամիս միայն կեանք ունեցաւ և յուսահատելով լուծուեցաւ. առանց միութեան հարը կարենալ լուծելու։ Ժողովրդին զգացած արդար զայրութը անկարելի է բացատրել, և մինթէ իրաւունք չունի ատել ու լքանել այնպիսիները, որոնք կրքի, անձնական շահի, եսի ու փառքի համար ազգին ճակատագրին հետ կը խաղան, Լօրէնսի հայերը մեծամասամբ համակիր են Հնչկ. Նորակազմ Վարչութեան։

* * *

Ցանձնախմբի ընտրութեան ժամանակ՝ Լօրէնսի և Հիվրըլի (1 քառորդ ժամ հեռի Լօրէնսէն) Հնչ. Նորակազմ մասնաճիւղը և Դաշ. տեղւոյն քոմիթէն իրենց մէջ համերաշխութիւն գոյացուցած մինչև ցարդ համերաշխ կը գործէին, թէև Ամերիկայի Դաշ. Ներկայացուցիչ Պ. Տիգրան Վահանեան (Յ. Իւսիւֆեան), մի քանի անգամներ փորձած էր այս համերաշխութիւնը խղել. սակայն չէր յաջողած իր նպատակն իրագործել, ի շնորհս մի քանի միութեան համակիր Դաշնակցական ընկերներու։

Պ. Տ. Վահանեան պատեհառթի մը կ'սպասէր իր վատ նպատակը իրագործելու համար։

Ինչպէս յայտնի է արդէն, որ Ամերիկայի մէջ գտնուող հայերը գործարաններու մէջ կը գործեն, (հարիւրին մէկը հազիւ թէ առևտրական գործով կը զբաղի), 1892էն ի վեր Միացեալ-Նահանգաց երկու նախագահներու փոփոխութեան պատճառով գրեթէ գործարաններու մէկ մասը անգործ են և գործաւոր հայերը ստիպուած են քաղաքէ քաղաք դիմել գործ գտնելու համար։ Այս տխուր վիճակին ենթարկուեցան վերև յիշուած միութեան համակիր Դաշնակցական ընկերներն ալ, որով Պ. Տ. Վահանեան իր վատ նպատակին հասնելու միջոցը գտնելով՝ յաջողեցաւ խզել համերաշխութիւնը և իրարմէ հեռացնել Հնչակեաններն և Դաշնակցականները ու ափ մը գաղթական ժողովրդի մէջ ատելութիւն և թշնամութիւն սերմանել։ Ընթերցողին լուրջ և արդար դատողութեանը կը յանձնարարենք այսպիսիները։

Պ. Տ. Վահանեան շյի՞շեր արդեօք երբ Պոսթընի հրապարակային ժողովին մէջ կը քարոզէր թէ «Հնչակ. (Նորակազմ) և Դաշնակ. երկու յեզի. մարմինները ձեռք ձեռքի տալով պիտի գործեն Հայրենիքի փրկութեան համար» Պ. Վահանեան անոնցմէ է որ մութին մէջ դաւադրութիւն կը սարքեն, լոյսին մէջ ժողովրդասէրի կեղծ դիմակը կը հագնին, ինքն էր որ Ամերիկա բանելէն երեք օր յետոյ, 1896 սեպտ. մէջ) լուծեց մի այնպիսի միութիւն, որ գոյացած էր 25 ներկայացուցիչներու հաւանութեամբ (*)։

Ցաւալի է ըսել թէ՝ մինչև ցարդ Դաշնակց. ընկերներէ բողոք մը չի բարձրացաւ և բնա՛ւ համար չպահանջուեցաւ Պ. Վահանեանի մնապետական ու բռնապետական ընթացքին համար։ Դաշնակցական ընկերներու լուրջ ու խորին ուշադրութիւնը կը հրաւիրենք այսպիսի ներկայացուցիչներու վրայ, որոնք փոխանակ սէրոյ և միութեան՝ մի միայն ատելութեան սերմ կը ցանեն ժողովրդին մէջ և արդելք կը հանդիսանան ազգին կենսական խրդրին լուծմանը։

ՆՈՐ-ԱՑՐ

ԿԻՊՐՈՍ

ԼԱՐՆԱԿԱ, 1(13 հոկտ.

Կիպրոսի ամբողջ բնակչութիւնը՝ հայ, յոյն Թուրք և այլն. այս օրերս իրենց խօսակցութեան նիւթ ըրած են հեռաւեալ դէպքը, որ թէև ինքնին ոչինչ է. բայց Հայ Յեղափոխութեան և քաղաքական հանգամանքներու տեսակէտով շա՛տ տխուր և սրտայոյզ է . . . . . .

Սեպտեմբեր 25, հինգշաբթի օր Ալեքսանտրիայէն տեղ հասնող յունական շոգենաւին բերած երկու սնտուկ (60) հրացանները մաքսատան մէջ գրուեցան։ Ըստուգուեցաւ որ զէնքերը բերող անձը՝ պարսկահպատակ Դրօշակեան մըն է, թէև ինք կ'ըսէ թէ պարսիկ է։

Տեղական իշխանութիւնը՝ նաւուն նաւապետն ու զէնքերը բերող Դրօշակեանը դատաստանի ենթարկեց. առաջինէն 100 և վերջինէն 50 ոսկի պահանջեց, որպէս զի որոշեալ օրը դատավարութեան ներկայ գտնուին։

Մաքսատան քրիստոնեայ պաշտօնեան՝ ցաւ ի սիրտ մեզ կ'ըսէր. «Ամօթ չէ՞ ձեզ հայեր, որ ունիք այսպիսի անճարակ քոմիթէներ, որոնք առանց յիմարական ձեռնարկներով գործերնիդ խապառ կը վտանգեն և նպատակէն շա՛տ հեռու կը մղեն զայն, միթէ ձեր տրամադրութեան տակ չէ՞ր բոլոր մակոյկները, դուք չո՞ւնիք կարող, լուրջ և գաղտնապահ գործիչներ»։

Արդարև ունկնդիր հայերս. ամօթահար եղած չէինք գիտեր ինչ պատասխանելնիս։ Անճարակութի՞ւն թէ ցուցամոլութիւն ընդունինք այս անախորժ միջադէպը։ Եթէ անճարակութիւն է ըսենք, ամօթ չէ՞ Դաշնակցութեան որ այսպիսի անկարող հմբակներու կը յանձնէ փափուկ և մեծ կարևորութիւն ունեցող գործ մը. իսկ եթէ ցուցամոլութիւն է, աս ալ շատ ապերելի և քննադատելի արարք մըն է. քանզի կրնայ նորէն մեծ աղէտներու տեղի տալ և Թուրք կառավարութիւնը իր բարերար արթուն աչքերով անքթիթ մեզ կը դիտէ . . . . Արդեօ՞ք Պ. Դրօշակեանները կ'ուզեն հայ ժողովրդին ցոյց տալ թէ ամենուրէք են և կը գործեն շարունակաբար։ Շա՛տ կը սխալին, սրբապղծութիւն գործելու չափ կը մեղանչեն։

Սուլթանին անմիջապէս հեռագրուած է թէ՝ »հայ քոմիթէները 60 »հազար հրացան բերած են Կիլի»կիկիա տանելու համար, ուրկէ »Զէյթուն պիտի տանին նոր ա»պստամբութեան մը համար«։

Խնդիրը հոն չէ որ 60 թիւը 100ով բազմապատկուած կր ներկայացուի Թուրք կառավարութեան, այս անիսոհեմ քայլերն ու շարժումները մեր ձեռքերը կապկպելով՝ ազգին գերեզմանը կը պեղեն։ Կիպրոսի մահմէտականները կատղած դալան դարձած. կը հարուածեն ու կը ծաղրեն զմեզ, իսկ քրիստոնեաները ցաւելով կը քննադատեն այս ողորմելի գործը։

Ազգային արժանապատուութիւնը և յեղափոխականի վարկը կոտրած՝ զէրօի համարժէք է. . . . ի շնորհս պառոտախօս և արկարող մարդերու . . . . .

Ժողովրդին պահանջած յեղափոխութիւնը այս ողորմելի գործերով չեն յաջողիր, ջանալու է այս չարիքները չկրկնել, ազգին պառակտած ոյժերը միացնելով փրկութեան գործը առաջ վարելու է լրջօրէն և կատարեալ գաղտնապահ եղանակով, ազատութեան ճանապարհը պիտի հարթէ հարազատ ՄԻՈՒԹԻՒՆԸ։

Կ. Ն.

ԹԱԹԱՐԱԶԱՐՃԸՔԻ ՀԱՅԵՐԸ

Հայոց գաղթականութեան հոսանքը ինչպէս Պուլկարիոյ բոլոր քաղաքները՝ նոյնպէս և հոս ալ քշեց բերաւ, զուրկ իրենց սիրելիներէն ու հայրենիքէն։ Օրապահիկ մը հայթայթելու և օտարին ձեռք չկարկառելու համար օրն ի բուն կ'աշխատին ու կը տքնին՝ իրենց աչքը յառած ապագայ Հայկական խնդրի կարգադրութեան, որ մի ժամ առաջ վերադառնան իրենց ցանկալի հայրենիքը, երբեք չեն թերանար ամեն մէկ ազգային պարտականութեանց մէջ, զոր շատ անգամ գործնականին մէջ նմոյշ մը կը ձգեն տեղական ազգայնոց վրայ և որ գրեթէ առ հասարակ կ'օգտուին այս գաղթական ճուլումէն։

Քաղաքիս բնիկներուն թիւը 25 տունի կը հասնի, ունին Ս. Ստեփաննոս անուն եկեղեցի մը, որուն բակին մէջ հաստատուած է երկսեռ վարժարան մը Խորէնեան անունով, որ կը կառավարէր մի տիրացու վարժապետ սիմոնական մեթոտով։ Աշակերտաց միտքը, սիրտը, հանճարն ու հոգին բթացընելէ ուրիշ բանի չէր ծառայեր, իր պաշտօնին անգիտակ ու իր կոչման հակառակ տիպար մըէ էր։ Երկար տարիներ մանուկներու մատաղ միտքերը խամրեցնելէ յետոյ, գաղթականաց հոսանքին հանդիպելով խորասոյզ եղաւ։

Ուրախ է մեզ ըսել որ. այժմ թաթարբազարճիքի ազգայնոց կրթական գործը յանձնուած է ծանօթ ուսուցիչ Պ. Տիգրան Վարդանեանի և կը վարէ վարժարանը օգնական ուսուցիչով մը։ Այժմէն իսկ կարելի է դուշակել վարժարանին ապագայ վիճակը, կարող ղեկավարի մը անձանձիր աշխատութենէն, որ հայ մանուկը ազգային դրօշմով կը կրթուի արդի դիւրուսոյց եղանակով։ Քանի՞ փափաքելի է դիտել այն փոքրիկ թըրքախօս մանուկները՝ որ խանձարուրէ նոր ելած երախաներու պէս թոթովելով կը խօսին հայերէն բառերը, իսպառ մոռնալով ծթրած և երևակայական գաղափարները։ Կրթական այս յեղաշրջումը, մեծ սփոփանք մըն է գաղթականաց սրտին, որ մայրենիլեզուն և ազգային ոգին կը վերածնի այս տեղի բուռ մը հայերուն մէջ։

Ե. ԱՐԹԻՆ

ՆԱՄԱԿ ՍԻԼԻՍՏՐԷԷՆ

27 սեպտ. 1897

«Միութիւն»ի 14րդ թիւին մէջ մեր նախորդ դասատուի մասին գրուած քանի մը ստայօդ տողերը շատ զարմանք և անհունն վիշտ պատճառեց մեզ։ Ուսահ աւելորդ չեմ համարիր այդ անտեղի գրուածքին սուտ ու սխալ ըլլալը «Միութիւն»ի ընթերցողաց ներկայացնել։

Նամակագիր պարոնը՝ ծանր յանցանք կը նկատէ մեր Պ. դասատուի դերասանական արհեստի ծառայելը, մինչդեռ այդ մասին եթէ ինքը գաղափար ունենար, այդքան առաջ չէր երթար։ Երկրորդ՝ կը գրէ որ, Պ. դասատուն՝ քաղաքիս մէջ Հայ Երիտ. Միութիւն անունով ընկերութիւն մը կազմելով իրեն յանձնուած դերամին գեղծում գործած է։ Իբրև գործօն անդամ այդ ընկերութեան. պաշտօնապէս կը յայտարարեմ որ Պ. դասատուի կողմէն այդ դրամական գործողութեան մէջ ո՛ր և է փոքրիկ թերութիւն գործուած չէ, այդ Պ. նամակագիրը ատելութենէ մղեալ գրած է այդ զրպարտութիւնները։ Եւ ուրիշ տեղ մըն ալ կ'ըսէ. «ուրիշ օր մը դասատուն՝ ընթերցարանի գոց դուռը խորտակելով գրքերն ելլն տակն ու վրայ կ'ընէ և կը հեռանայ»։

Այս ամենասոսկալի սուտը այնքան հրէշային է, որքան Պ. դասատուն անմեղ ու անտեղեակ ընթերցարանի գրքերը տակն ու վրայ ըլլալէ։ Ճշգութիւնը այս է որ՝ այդ նամակագրին պէս քանի մը անձեր նախանձելով մեր դասատուին արդիւնաւոր աշխատութեան, գիշեր ատեն կ'երթան ընթերցարանի դուռը կը խորտակեն ամեն գիրքերը կը յափշտակեն, որոնք ներշնչումը այդ յօդուածագրէն կ'առնեն։

Վերջապէս ամբողջ Սիլիստրէ իր դասատուէն գոհ էր, բացի Պ. յօդուածագրի նման քանի մը հակառակորդներէ։ Ճիշդը խօսելով Պ. յօդուածագրին գրած սուտերն ու զրպարտութիւնները իր խելապատակին մէջ միայն գոյութիւն ունեցած են։

ԴԻՏՈՂ ՄԸ

(*) 1896 յունիս 12, 13 ին «Հայկազեան Հայրենասիրաց Միութիւն»ը ընդհ. միութիւն մը գոյացուցած էր, որը 3 ամիս տեւեց շնորհիւ այս Պ. ներկայացուցչին (Վահանեան)։ Նոյն Հայկզ. Միութիւնը վերջերս միացաւ Նորակազմ Հնչակեաններու հետ։